ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
N ԳՀԾՁԲ-22-10/6-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 18-ը մայիսի 2022թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Կ. Բրուտյանի, ով գործում է ՀՀ պաշտպանության նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Պատվիրատու, մի կողմից և **«ԳԻՊԱՐ» ՍՊԸ-ն,** ի դեմս տնօրեն **Ա. Արտաշեսյանի**, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև Կատարող, մյուս կողմից՝ երկուսը միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով 23.02.2022թ. կնքված N ԳՀԾՁԲ-22-10/6-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.15 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը, հիմք ընդունելով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու փաստը **(ֆինանասական միջոցները նախատեսվել են 23.12.2021թ. ՀՀ կառավարության N 2121-Ն որոշմամբ, Ծանուցում N 19-ՊՆ 18.04.2022թ., CPV՝ 50531151/501),** փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը՝ սահմանելով ***«Գազասարքավորումների վերանորոգման, կարգաբերման, փորձարկման»*** ծառայությունների գնման և վճարման ժամանակացույցեր՝ համաձայն Հավելված N 1-ի և N 2-ի:

1.2. Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ մատուցել Պայմանագրի Հավելված N 1-ով սահմանված տեխնիկական բնութագրի պահանջներին համապատասխան ***«Գազասարքավորումների վերանորոգման, կարգաբերման, փորձարկման»*** ծառայություններ (այսուհետ՝ Ծառայություն)՝ Համաձայնագրի Հավելված N 1-ով սահմանված գնման ժամանակացույցով նախատեսված ծավալներով և ժամկետներում, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել այդ Ծառայությունը և վճարել դրա համար՝ Համաձայնագրի Հավելված N 2-ով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված չափերով և ժամկետներում:

2. Գինը և վճարման կարգը

2.1 Սույն Համաձայնագրով Կատարողի մատուցելիք Ծառայության առավելագույն գինը կազմում է **8 000 000 (ութ միլիոն)** ՀՀ դրամ: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա, այն ստորագրվելուց հետո Համաձայանագրի վճարման ժամանակացույցով (Հավելված N 2) նախատեսված չափերով և եռամսյակներում: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա **դեկտեմբերի 26-ը:**

3. Այլ պայմաններ

3.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի սույն Համաձայնագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքները և պարտականությունները, Ծառայության հանձման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3 Սույն Համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.4 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 2 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի N 1 և N 2 Հավելվածները հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է Համաձայնագրի մեկ օրինակ:

3.5 Պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՊՆ ԿՇ և ԱԲ վարչությունը:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Գիպար» ՍՊԸ
ք. Երևան Բագրևանդի 5	Արարատի մարզ գ. Այնթապ 5 շարք 19 տ.
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 900011144079	Հ/Հ 1570050758640100
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 04232687
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ	տնօրեն
Կ. ԲՐՈՒՏՅԱՆ	Ա. ԱՐՏԱՇԵՍՅԱՆ

Հավելված N 1
N ԳՀԾՁԲ-22-10/6-1 պայմանագրի N 1 Համաձայնագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Ծառայությունների					
Հ/հ	անվանումը	տեխնիկական բնութագիրը	առավելագույն գինը (ՀՀ դրամ)	հասցե	2022թ. գնման ժամանակացույց
1	**Գազասարքավորումների վերանորոգում, կարգաբերում, փորձարկում**	ՊՆ զորամասերի ճնշման կարգավորիչ կետերի գազային սարքերի, սարքավորումների վերանորոգում, կարգաբերում, ստուգաչափում և սպասարկում	8 000 000	ՀՀ ՊՆ զորամասեր	II-IV եռամսյակներ, բայց ոչ ուշ, քան **10.12.2022թ.**

Ծառայություններն իրականացվելու են հանրապետության ողջ տարածքում (ՊՆ զորամասերում) նախատեսված առավելագույն գնի սահմաններում, համաձայն հաստատված հայտերի և օրացուցային գրաֆիկի:

Հավելված N 2
N ԳՀԾՁԲ-22-10/6-1 պայմանագրի N 1 Համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության								
Հ/հ	CPV	Անվանումը	Չափման միավորը	Քանակը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ ըստ եռամսյակների, այդ թվում			Ընդամենը /առավելագույն գինը/
					2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ, քան 26.12.2022թ.	
1	50531151/501	**Գազասարքավորումների վերանորոգում, կարգաբերում, փորձարկում**	դրամ	1	2 500 000	5 000 000	8 000 000	8 000 000

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ Պաշտպանության նախարարի տեղակալ

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ
«ԳԻՊԱՐ» ՍՊԸ տնօրեն

Ա. ԱՐՏԱՇԵՍՅԱՆ